

Ֆէէրիան գրուած է ոտանաւորով, որի գրական արժէքը չափելու համար բաւական են հետեւեալ օրինակները.

«Օ՛, Պարնիս, Հալդիա, Տիասպաս,
Արքային երկար կեանք ու օր տաս.
Յարաժամ թող լինի նա յաղթող,
Որ սփռէ թշնամուն ահ ու դող.
Արամազդ, Անահիտ ու Նանէ,
Արքայի զաւակաց դու պահէ...»

(42 եր.)

«Խնդրեց, աղերսեց, որ թողնենք անդ
Ու մեր յանդուգն մտադրութիւնը...»

(52 եր.)

«Երկու չարանենգ եղբայրները վատ
Անտառի խորքում նստան յուսահատ...»

(60 եր.)

Տ. Յ.

«ԱՄՈՒՐԵՆՆ». Հայ կանանց օրացոյց-հանդէս. 1903 թ. Առաջին տարի. խմբագրեց
Տիկին Նուարդ Ափինեան. 122 եր. դ. 50 կ. Ալեքսանդրօպօլ:

«Ախուրեանը» սովորական համառօտ օրացոյց է, որին իբր յաւելուած կցուած է մի փոքրիկ ֆէմինիստական ժողովածու, ֆէմինիստական բառի ընդարձակ նշանակութեամբ:

Ժողովածուն սկսւում է մի վերին աստիճանի անգրագէտ յօդուածով, որ՝ պէտք է յուսալ՝ խմբագրական յօդուած չէ, թէև անստորագիր է: Յօդուածը կրում է «Մօր նշանակութիւնը» վերնագիրը և պարունակում է ի միջի այլոց այսպիսի մի սլաք-բերութիւն (բերում ենք ամբողջը՝ վերջակէտից վերջակէտ) — «Այն ընտանիքի մայրը, որի աչքի առաջն է իւր պարտաւորութիւնների իդէալը, որովհետև նա գիտէ, որ այս տաղտալի մօղայիկից պէտք է գեղեցիկ տեսարան դուրս դայ»:

Արդարութիւնը պահանջում է ասել, որ այդ յօդուածը միակ անգրագէտն է ամբողջ ժողովածուի մէջ, որ ընդհանրապէս կազմուած է յաջող կերպով:

Ընթերցողներին ժողովածուի բովանդակութեան մասին գաղափար տալու համար բերում ենք յօդուածների ցանկը.

1) «Կնոջ դերը». Մառի. 2) «Դաստիարակութիւն իգական սեռի». Մառի. 3) «Երեխաների ստախօսութիւնը» (Բեօմէի մանկավարժական նամակներից). 4) «Յղի կնոջ և ծննդկանի կենդանավարութիւնը». կին բժիշկ Վ. Ա. Վօլկէնշտէյն. 5) «Ինչպէս պէտք է խնամել նորածին» (քաղուածք Жукъ-ից և Car.

net de Bébé-ից. Ա. Բուդուզեան-Նազարեան. 6) «Ինչպէս պէտք է կերակրել ծծկեր մանուկներին». Թարգմ. տիկին Ս. Բաբայեան. 7) «Մի փոքրիկ յիշողութիւն» (խուլ ու համրների դպրոցը Վիեննայի Դեօբլինգ արուարձանում). տիկին Տիրուհի Կոստանեանց. 8) «Սրբուհի մայրապետ Գալֆայեան» (կենսագրութիւնը և պատկերը). 9) «Տիկին Սրբուհի Տիւսար» (կենսագրութ. և պատկերը): 10) «Տիկին Զապէլ Տօնէլեան (Սիպիլ)» (կենս. և պատկերը). 11) «Ղազարոս Աղայեանց» (կենսագրական և քըննադատական ակնարկ և պատկերը). Մ. Յար. 12) «Թոքախտաւոր հօր կտակը իւր էմմա դստեր». («Հիւանդ սէր»—Մանտեգացա). 13) «Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւններ. 14) «Մանկական օրինակելի գրադարան». (քաղուածք պ. Յ. Տէր-Միրաքեանի «Դեռահասների ազատ ընթերցանութիւնը» գրքից): Կանանց օրացոյցի բովանդակութիւնը կարող էր ի հարկէ աւելի հարուստ լինել, բայց չը պէտք է մոռանալ, որ այս առաջին փորձն է:

Փողովրդական գրադարան. Էդմօն Թեոի. «ՎԱՐԺԱՊԵՏԸ». Ֆրանս. Թարգմ. Լեոն Մ.-Աղ. 20 եր. գ. 5 կ. Թիֆլիս, 1902 թ.:

Էդմօն Թեոի մեզ պատմում է մի միջնադէպք Ֆրանսաւորուսական պատերազմի ժամանակից, մի պատկեր յաղթական գերմանացիների վայրագութիւնից, Ֆրանսիացի դիւղական ուսուցչի մի սխրագործութիւն:

Մի տարի, միմիայն մի տարի, Ֆրանսիայում տեղի ունեցան այնպիսի դէպքեր, որոնց նմանը ամեն օր կատարւում է Թիւրքիայում, և այդ մի տարուայ դէպքերը ստեղծեցին մանրավէպերի մի ամբողջ գրականութիւն:

Այդ մանրավէպերիցն է և Էդմօն Թեոի գրուածքը, որ պ. Լեոն Մելիք-Աղամեան Թարգմանել է Ֆրանսերէնից:

Թարգմանութիւնը չատ յաջող է:

Տ. Յ.

Կում Լեւ Տօրսոյ. «ԱՄՏԵՈՒՆ ԹԷ՝ ՄԱՄՕՆԱՅԻՆ». Թարգմ. Յով. Ստեփանեան. 18 եր. գ. 3 կոպ. Բագու. 1903 թ.:

Լեւ Տօրսոյի,—կարծեմ նա չէ ուղում, որ կոմա տիտղոսը կցուի իր անուան հետ,—«Աստծուն թէ՛ մամօնային» գրքոյը մի ոգևորուած քարոզ է գինու, օղիի և առհասարակ ոգեւից խըմիչքների գործածութեան դէմ: